

**Հայաստանում
Արտադրողի ընդլայնված
պատասխանատվության
(ԱԸՊ) համակարգի ներդրումը**

Սույն տեղեկատվական նյութը մշակվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ՝
«Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի տեխնիկական աջակցության
շրջանակում:

Ծրագրի իրականացնող՝ ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն

Ծրագրի ֆինասավորող՝ Շվեդիա

Ծրագրի կայքէջ՝ https://ace.aua.am/projects/waste_policy/

2025 թ.



Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկություններ
2. ԱԸՊ հիմնական հասկացությունները
3. Ինստիտուցիոնալ կառուցվածքը ԱԸՊ համակարգում
4. Արտադրողների և ԱՊԿ-ների պարտավորությունները ԱԸՊ համակարգում
5. Պատասխանատվություն և տուգանքներ ԱԸՊ համակարգում
6. Հաշվետվողականությունը ԱԸՊ համակարգում
7. ԱԸՊ ներդրման ճանապարհային քարտեզ

1. Ընդհանուր տեղեկություններ

Հայաստանում ԱԸՊ համակարգի ներդրման անհրաժեշտությունը (քաղաքականություններ)

- ՀՀ-ն պարտավորվել է ներդնել ԱԸՊ ինստիտուտը **ԵՄ-ՀՀ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի** 104.3 կետի համաձայն՝ «Աղտոտողը վճարում է» սկզբունքի և արտադրողի ընդլայնված պատասխանատվության միջոցով ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմի ներդրմամբ:
- ՀՀ կառավարության 2019 թ. N666-Լ որոշմամբ և 2021-2026 ծրագրով ԱԸՊ ներդրումը ամրագրված է որպես **պարտադիր քայլ**՝ թափոնների կառավարման բարեփոխման ուղղությամբ:

Օրենքով կարգավորվող թափոններ

Հայաստանի Հանրապետությունում արտադրված կամ Հայաստանի Հանրապետություն ներմուծված արտադրողի ընդլայնված պատասխանատվության ապրանքի (արտադրանքի)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրացման, սպառման կամ օգտագործման արդյունքում առաջացած **հատուկ թափոններ**:

ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) նախնական ցանկ

Հայաստանում ԱԸՊ համակարգի ներդրման սկզբնական շրջանում նախատեսվում է ԱԸՊ պարտավորությունը տարածել հետևյալ ապրանքների վրա:

1. Ապրանքներ (արտադրանք), որոնց իրացման, սպառման կամ օգտագործման արդյունքում առաջանում են ապակու, թղթի, պլաստիկի, մետաղյա **փաթեթավորման և փաթեթվածքի** (օրինակ՝ շշեր, տուփեր և այլն) թափոններ,
2. **առաջնային մարտկոցներ և կուտակիչներ** (կենցաղում օգտագործվող),
3. **ավտոմոբիլային անվադողեր, յուղեր, ֆիլտրեր,**
4. **էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ:**

Ընտրությունը կատարվել է ԵՄ-ի և միջազգային լավագույն փորձին համահունչ, հաշվի առնելով ՀՀ շուկայում առկա թափոնների ազդեցությունը և կառավարման հրատապությունը՝ Հայաստանում առկա վերամշակման հզորությունների և ներդրումային պոտենցիալի հիման վրա: Ցանկը ենթակա է հաստատման ՀՀ կառավարության կողմից:

ԱԸՊ-ի ներդրման սոցիալ-տնտեսական օգուտները

Ըստ նախնական գնահատումների.

- ~ 500 կանաչ աշխատատեղերի (փաթեթավորման, էլեկտրոնիկայի, անվադողերի, մարտկոցների և թափոնների այլ խմբերի կառավարման ոլորտում) ստեղծում
- > 2.4 մլրդ ՀՀ դրամի չափով հարկվող եկամտի ձևավորում՝ ԱԸՊ համակարգի լիարժեք ներդրման արդյունքում
- երկրորդային հումքի նոր շուկաների ձևավորում
- գործող վերամշակող բիզնեսների զարգացման խթանում
- միջազգային շուկայում հայկական արտադրողների կորպորատիվ պատասխանատվության և մրցունակության բարձրացում

ԱԸՊ-ի ներդրման բնապահպանական օգուտները

- **Աղբավայրերում թափոնների ծավալների էական կրճատում**
 - >98% ոչ սանիտարական աղբավայրերում տեղադրվող թափոնների կրճատման հեռանկար
- **Երկրորդային հումքի ավելի լայն օգտագործում**
- **Շրջակա միջավայրի աղտոտման նվազեցում**
 - հողի, ջրի, օդի աղտոտման կանխարգելում
- **Հանրային առողջության վրա բացասական ազդեցության նվազեցում**
 - հատկապես վտանգավոր թափոնների (մարտկոցներ, անվադողեր, էլեկտրոնիկա) էկոլոգիապես անվտանգ գործածություն

Ինչպես է գործում ԱԸՊ-ն

- **Արտադրողը** վճարում է ԱՊԿ-ին (խմբային ձև) կամ իրականացնում իր պարտավորությունն անհատական ձևով
- Արտադրողի կողմից կատարված վճարների հաշվին ԱՊԿ-ն կազմակերպում է հատուկ թափոնների տեսակավորված հավաքումը և գործածությունը, իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարում է օպերատորներին, ՏԻՄ-երին, վերամշակողներին, իրականացնում է հանրային իրազեկման արշավներ
- **ՏԻՄ-երը** աջակցում են տեղական ենթակառուցվածքների զարգացմանը
- **Տեսչական մարմինը** և **Լիազոր մարմինը** ապահովում են վերահսկողություն և հաշվետվողականություն
- Արդյունքները ներկահրապարակվում են **ԱԸՊ էլեկտրոնային հարթակում**



**ԱԸՂ ԱՂՐԱՆՔՆԵՐԻ
ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՂՆԵՐ**


Տվյալ ԱԸՂ ապրանքի բոլոր արտադրողներն ու ներմուծողները պարտավոր են պայմանագիր կնքել ԱՂԿ-ի հետ և վերջինիս վճարել ԱԸՂ վճար կամ օրենքով սահմանված հիմքերի ամկայության դեպքում իրականացնել ԱԸՂ պարտավորությունն անհատական ձևով՝ լիազոր մարմնի կողմից տրված անհատական թույլտվության հիման վրա:

**ԱՂԿ ՀԻՄՆԱԴԻՐ
ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ**



ԱՊԿ-ի կառավարումը

- Ներառականություն
- Թափանցիկություն
- Վերահսկելիություն
- Հանրային հաշվետվողականություն



ԱՊԿ-ի գործունեության ուղղությունները

- Հատուկ թափոնների գործածության **ենթակառուցվածքների** ու կարողությունների ստեղծում և զարգացում
- Հատուկ թափոնների վերադարձի **խրախուսիչ միջոցառումների** իրականացում
- Հատուկ թափոնների առաջնային տեսակավորման և գործածության վերաբերյալ **հասարակության իրազեկվածության**, տեղեկատվական արշավների, տեղեկատվական և իրազեկման ծրագրերի իրականացումը.
- Հատուկ թափոնների գործածության ոլորտում **հետազոտություններին և նորարարություններին** աջակցություն
- Օրենսդրությանը և ԱՊԿ-ի կանոնադրային նպատակներին չհակասող այլ գործունեություն:

2. ԱԸՊ հիմնական հասկացությունները

Օրենքում ներկայացված հասկացությունները

1. Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն (ԱԸՊ)
2. ԱԸՊ ապրանք (արտադրանք)
3. Հատուկ թափոն
4. Հատուկ թափոնների գործածություն
5. Արտադրող
6. Արտադրողի պատասխանատվության կազմակերպություն (ԱՊԿ)
7. Խմբային ձև
8. Անհատական ձև
9. Խմբային թույլտվություն
10. Անհատական թույլտվություն
11. ԱԸՊ վճար
12. ԱԸՊ վճարի դրույքաչափ
13. Ֆինանսական երաշխիք
14. Նորմատիվներ
15. Հատուկ թափոնների գործածության համաձայնություն
16. Հատուկ թափոնների խմբեր
17. Հատուկ թափոնների առաջնային տեսակավորում
18. Հատուկ թափոնների երկրորդային տեսակավորում
19. Շրջանաձև տնտեսություն

Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն

Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) իրացման, սպառման կամ օգտագործման արդյունքում առաջացած հատուկ թափոնի գործածությունը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովելու արտադրողի պարտավորություն.

ԱԸՊ ապրանք (արտադրանք)

Կառավարության սահմանած ցանկում ներառված այն ապրանքները, որոնք դառնում են հատուկ թափոն՝ սպառումից հետո:

Հատուկ թափոն

ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) սպառման արդյունքում առաջացող և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված թափոն:

Հատուկ թափոնների գործածություն

Գործողություններ՝ հատուկ թափոնների հավաքման, տեսակավորման, փոխադրման, պահման, տեղադրման, կրկնակի օգտագործման, մշակման, վերամշակման, օգտահանման, հեռացման կամ վնասազերծման ուղղությամբ:

Արտադրող

Անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ կամ օտարերկրյա իրավաբանական անձի հայաստանյան մասնաճյուղ կամ ներկայացուցչություն, որը ՀՀ տարածքում իրացնում է՝ իր արտադրած ԱԸՊ ապրանքը կամ ներմուծում է այն ՀՀ տարածք:

Արտադրողի պատասխանատվության կազմակերպություն (ԱՊԿ)

ԱՊԿ՝ Հիմնադրամի կարգավիճակով ստեղծված կազմակերպություն, որը լիազոր մարմնի կողմից տրված թույլտվության հիման վրա ապահովում է իր հետ պայմանագիր կնքած արտադրողների ԱԸՊ պարտավորության կատարումը:

Խմբային ձև

ԱՊԿ-ի միջոցով ԱԸՊ պարտավորությունների իրականացում՝ պայմանագրի հիման վրա:

Անհատական ձև

Արտադրողի կողմից, օրենքով սահմանված դեպքերում և լիազոր մարմնի կողմից տրված թույլտվության հիման վրա, սեփական ԱԸՊ պարտավորությունների իրականացում՝ առանց ԱՊԿ-ի հետ պայմանագրի կնքման:

ԱԸՊ վճար

Հատուկ թափոնի խմբի կամ միավորի ծավալի համար՝ ԱՊԿ-ին վճարվող վճար, որն ապահովում է ԱԸՊ պարտավորության կատարումը:

Ֆինանսական երաշխիք

ԱՊԿ-ի կամ արտադրողի կողմից տրամադրվող ապահովման միջոց՝ նորմատիվների չկատարման դեպքում տուգանքի վճարման պարտավորության կատարումը ապահովելու նպատակով:

Հատուկ թափոնի հայտարարագիր

Արտադրողի կողմից ներկայացվող և գործածության ենթակա հատուկ թափոնի, դրա օրենքով սահմանված կարգով գործածված ծավալի վերաբերյալ տեղեկությունը ներառող փաստաթուղթ:

- ԱԸՊ խմբային ձևի շրջանակում ԱԸՊ վճարի հաշվարկման համար հիմք հանդիսացող հայտարարագիրն արտադրողը ներկայացնում է ԱՊԿ-ին, իսկ վերջինս լիազոր մարմնին:
- ԱԸՊ անհատական ձևի շրջանակում արտադրողը հայտարարագիրը ուղղակիորեն ներկայացնում է լիազոր մարմնին:

Նորմատիվներ

Կառավարության կողմից սահմանվող տարեկան նվազագույն ցուցանիշներ՝ հատուկ թափոնների գործածության համար (տոկոսով արտահայտված):

ԱՊԿ-ները և անհատ արտադրողները պարտավոր են ապահովել այդ նորմատիվների կատարումը:

Նորմատիվները սահմանված ժամկետներում ենթակա չեն նվազեցման:

ԱԸՊ ռեեստր

Լիազոր մարմնի կողմից վարվող՝ ԱԸՊ ապրանքների, հատուկ թափոնների, արտադրողների և ԱՊԿ-ների պաշտոնական հաշվառման համակարգ:

3. Ինստիտուցիոնալ կառուցվածքը ԱԸՊ համակարգում



**ԱԸՂ ԱՂՐԱՆՔՆԵՐԻ
ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՂՆԵՐ**

Տվյալ ԱԸՂ ապրանքի բոլոր արտադրողներն ու ներմուծողները պարտավոր են պայմանագիր կնքել ԱՂԿ-ի հետ և վերջինիս վճարել ԱԸՂ վճար կամ օրենքով սահմանված հիմքերի ամկայության դեպքում իրականացնել ԱԸՂ պարտավորությունն անհատական ձևով՝ լիազոր մարմնի կողմից տրված անհատական թույլտվության հիման վրա:

**ԱՂԿ ՀԻՄՆԱԴԻՐ
ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ**



ԱԸՂ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՄ

ԲՆԱՂԱԳՊԱՆԱԿԱՆ
ՀԱՐԿ (նվազեցված
դրույթաչափով)

ԱՂԿ-Ն ՀԱՇՎԵՏՈՒ Է

- հավաքված և վերամշակված քանակներ
- ծախսված գումարներ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

- սահմանում են վերամշակված թիրախներ թափոնների խմբերի համար
- տրամադրում են ԱՂԿ-ներին լիցենզիա կամ թույլտվություն

ԱԸՊ հիմնական դերակատարներ

Կառավարություն

- Սահմանում է քաղաքականությունը և իրավական շրջանակը
- Հաստատում է ապրանքների, թափոնների ցանկերը, նորմատիվները, ընթացակարգերը

Լիազոր մարմին

- Տրամադրում է թույլտվություններ և վերահսկում կատարողականը
- Վարում է ԱԸՊ ռեեստրը և էլեկտրոնային հարթակը
- Իրազեկում և մեթոդական աջակցություն է ցուցաբերում

Տեսչական մարմին

- Իրականացնում է վերահսկողություն
- Կիրառում է պատասխանատվության միջոցներ խախտումների դեպքում

ՏԻՄ

- ԱՊԿ-ների հետ պայմանագրերի կնքում
- Տեղական ենթակառուցվածքների ստեղծման խթանում
- Հասարակության իրազեկման իրականացում

ԱՊԿ

- Նորմատիվների կատարում ԱՊԿ պայմանագիր կնքած արտադրողների համար
- Հատուկ թափոնների տեսակավորված հավաքման և գործածության ապահովում
- Տարեկան ֆինանսական և տեխնիկական հաշվետվություն, հրապարակում

Արտադրողներ

- Ընտրում են խմբային կամ անհատական ԱԸՊ մոդել
- Վճարում են ԱԸՊ վճար
- Ներկայացնում են հաշվետվություններ (հատուկ թափոնի հայտարարագիր)

ԱԸՊ հիմնական դերակատարների լիազորությունները և պարտավորությունները

Կառավարություն

- Սահմանում է պետական քաղաքականությունը ԱԸՊ ոլորտում
- Հաստատում է՝
 - ԱԸՊ ապրանքների և հատուկ թափոնների ցանկը
 - Տարեկան նորմատիվները
 - Թույլտվությունների տրամադրման կարգը
 - Ֆինանսական երաշխիքների պահանջները
 - ԱԸՊ էլեկտրոնային հարթակի և ռեեստրի կարգավորումները
- Ներկայացնում է փոփոխություններ հարակից օրենսդրության մեջ (օրինակ՝ հարկային, մաքսային և այլ ոլորտներում)

ԱԸՊ հիմնական դերակատարների լիազորությունները և պարտավորությունները

Լիազոր մարմին

- Կառավարության քաղաքականության իրականացում
- ԱԸՊ ռեեստրի և էլեկտրոնային հարթակի վարում
- Խմբային և անհատական թույլտվությունների տրամադրում
- Հատուկ թափոնների գործածության համաձայնությունների տրամադրում
- Արտադրողների, ԱՊԿ-ների, ՏԻՄ-երի իրազեկում
- Մեթոդաբանական աջակցություն և վերահսկողություն տվյալների ներկայացման մասով

ԱԸՊ հիմնական դերակատարների լիազորությունները և պարտավորությունները

Տեսչական մարմին

- Իրականացնում է վերահսկողություն ԱԸՊ օրենքի պահանջների կատարման նկատմամբ
- Ստանում է տարեկան վարչական վիճակագրական հաշվետվություններ ԱՊԿ-ներից և անհատ արտադրողներից
- Կիրառում է տուգանքներ օրենքի պահանջների խախտման դեպքում

ԱԸՊ հիմնական դերակատարների լիազորությունները և պարտավորությունները

ՏԻՄ

- ԱՊԿ-ների հետ ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում
- Համայնքի մակարդակով հատուկ թափոնների տեսակավորված հավաքման համակարգերի աջակցում և իրազեկում
- Հատուկ թափոնների գործածության ենթակառուցվածքների ստեղծման խթանում
- Տարեկան տվյալների հրապարակում համայնքային մակարդակով
- Տեսչական մարմնին եռամսյակային հաշվետվությունների ներկայացում

ԱԸՊ հիմնական դերակատարների լիազորությունները և պարտավորությունները

ԱՊԿ

- Նորմատիվների կատարման ապահովում իր հետ պայմանագիր կնքած արտադրողների համար
- Հատուկ թափոնների տեսակավորված հավաքման, տեսակավորման, փոխադրման, գործածության կազմակերպում
- Վերադարձի մեխանիզմների (օր.՝ դեպոզիտային համակարգ) ներդրում
- Տարեկան ֆինանսական և տեխնիկական աուդիտի ապահովում
- Տեղեկատվության հրապարակում ԱԸՊ էլ. հարթակում
- Հասարակության իրազեկման արշավների իրականացում

ԱԸՊ հիմնական դերակատարների լիազորությունները և պարտավորությունները

Արտադրողներ

- Ընտրում են՝ խմբային (ԱՊԿ-ի հետ պայմանագրի հիման վրա) կամ անհատական ձևով ԱԸՊ պարտավորությունը կատարելու եղանակ
- Տրամադրում են հատուկ թափոնի հայտարարագիր
- Վճարում են ԱԸՊ վճար (խմբային մոդելի դեպքում՝ ԱՊԿ-ին, անհատական մոդելի դեպքում՝ ինքնուրույն)
- Կատարում են հատուկ թափոնների տեսակավորված հավաքման և գործածության պարտավորություններ (անհատական ձևի դեպքում՝ ամբողջությամբ իրենց հաշվին)

4. Արտադրողների և ԱՊԿ-ների պարտավորությունները ԱԸՊ համակարգում

Արտադրողների պարտավորությունները

Բոլոր Արտադրողները (անկախ ձևից)

- ԱԸՊ պարտավորությունը ծագում են ապրանքի օտարման պահից (Հոդված 20)
- իրացվող ապրանքների մասով ԱԸՊ պարտավորություն են կրում Հայաստանի ողջ տարածքում

Արտադրողների պարտավորությունները

Եթե մասնակցում է
ԱՊԿ-ի խմբային ձևով
(ԱՊԿ-ի հետ
պայմանագիր)

- Կնքում է ԱՊԿ-ի հետ ԱԸՊ պայմանագիր (Հոդված 28)
- Ներկայացնում է Հատուկ թափոնի հայտարարագիր (դիմում ԱՊԿ-ին՝ ԱՊԿ-ի միջոցով ներկայացվում է լիազոր մարմնին) (Հոդված 30)
- Վճարում է ԱԸՊ վճար ԱՊԿ-ին՝ ըստ պայմանագրի և օրենքի

Արտադրողների պարտավորությունները

Եթե ընտրում է
անհատական ձև
(առանց ԱՊԿ-ի)

- Ստանում է **Անհատական թույլտվություն** (Հոդված 35)
- Իրականացնում է ԱԸՊ պարտավորությունների կատարման ամբողջ ծավալը
- Ներկայացնում է.
 - **Հատուկ թափոնի հայտարարագիր** (ամեն եռամսյակ)
 - **Տարեկան վարչական վիճակագրական հաշվետվություն** (Հոդված 19)
 - **Հատուկ թափոնի գործածության ապահովման հիմնավորող փաստաթղթեր**
- Ներկայացնում է **Ֆինանսական երաշխիք** (Հոդված 47)

Արտադրողների պարտավորությունները

Հատուկ կարգավիճակ
ԱՊԿ-ի խմբային ձևով
մասնակցելու
(Հոդված 38–39)

- Արտադրողը կարող է ստանալ **Հատուկ թափոնների գործածության համաձայնություն**

Վերջինս նախատեսված է օրենքի **Հոդված 38–39**-ով,
և կիրառվում է **կոնկրետ դեպքերում**, երբ
արտադրողը կամ ԱՊԿ-ն ցանկանում է **համալրել**
կամ **փոխհատուցել** իր նորմատիվային
պարտավորությունը փաստացի կատարած
հատուկ թափոնների գործածության ծավալով:

Այս դեպքում՝ այդ գործածված ծավալի համար
արտադրողը **ԱԸՊ վճար չի վճարում**:

ԱՊԿ-ների պարտավորությունները

**Յուրաքանչյուր
ԱՊԿ պարտավոր է.**

- Իր հետ ԱԸՊ պայմանագիր կնքած արտադրողների համար **նորմատիվների կատարում** (Հոդված 24.1)
- **ԱՊԿ-ի կողմից ԱԸՊ պարտավորության ապահովում ՀՀ ամբողջ տարածքում** (Հոդված 24.2)
- Հատուկ թափոնի գործածության համար պայմանագրերի կնքում երրորդ անձանց հետ (Հոդված 24.3)
- **Տարեկան վարչական վիճակագրական հաշվետվություն** Տեսչական մարմնին (Հոդված 19)

ԱՊԿ-ների պարտավորությունները

Յուրաքանչյուր
ԱՊԿ պարտավոր է
ապահովել.

- Տարեկան **ֆինանսական** աուդիտ (Հոդված 24.5)
- Տարեկան **տեխնիկական** աուդիտ (Հոդված 24.6)
- ԱՊԿ-ի **էլեկտրոնային հարթակում** հրապարակում պարտադիր տվյալներ
- **ֆինանսական երաշխիք** նորմատիվների չկատարման տուգանքի հնարավոր պահանջի համար (Հոդված 47)

ԱԸՊ պայմանագրի հիմնական պայմանները

- նորմատիվների կատարման վերաբերյալ դրույթներ
- ԱԸՊ վճարի վճարման կարգն ու պայմանները
- առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունները, դրանց պաշտպանության վերաբերյալ դրույթներ և նման տեղեկության օգտագործման կարգը և պայմանները
- պայմանագրի գործողության ժամկետը, որը չի կարող պակաս լինել մեկ տարուց
- կողմերի պատասխանատվությունը

ԱԸՊ վճարի դրույքաչափը

- նորմատիվների կատարման վերաբերյալ դրույթներ
- ԱԸՊ վճարի վճարման կարգն ու պայմանները
- առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունները, դրանց պաշտպանության վերաբերյալ դրույթներ և նման տեղեկության օգտագործման կարգը և պայմանները
- պայմանագրի գործողության ժամկետը, որը չի կարող պակաս լինել մեկ տարուց
- կողմերի պատասխանատվությունը

ԱԸՊ վճար և բնապահպանական հարկ

Ըստ
նորմատիվի

ԱԸՊ վճար
(դրամ /տ)

Նվազում է
նորմատիվի
չափով

Բնապահպան
ական հարկ
(%)



ԱԸՊ վճար
+
նվազեցված
բնապահպանական
հարկ

Օրինակ

Մարտկոցի բնապ. հարկի
դրույքաչափը կազմում է **1.5%**:

Եթե նորմատիվը կազմում է 20%,
ապա՝ հաշվարկված հարկը
կնվազեցվի 20%-ով՝ կազմելով
1.2%:

Ներկրված մարտկոցների ողջ
ծավալի 20%-ի համար կգանձվի
ԱԸՊ վճար՝ օրինակ, 1 մլն ՀՀ
դրամ մեկ տոննայի համար:

5. Պատասխանատվություն և տուգանքներ ԱԸՊ համակարգում

ԱՊԿ-ն կամ անհատական թույլտվություն ունեցող արտադրողը

տուգանվում է.

- մինչև 5x ԱԸՊ վճարի դրույքաչափի չափով
- կրկնվելու դեպքում՝ 10x ԱԸՊ վճարի դրույքաչափի չափով

Նորմատիվները չկատարելու դեպքում

(վերամշակվել կամ վնասազերծվել է նախատեսվածից քիչ թափոն)

տուգանվում է.

- մինչև 5 մլն ՀՀ դրամ

Հայտարարագրի չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում

ԱՊԿ-ն կամ անհատական թույլտվություն ունեցող արտադրողը

տուգանվում է.

- մինչև 5 մլն ՀՀ դրամ

Ֆինանսական երաշխիք չտրամադրելու կամ վերջինիս բավարար չափի չլինելու դեպքում

ԱՊԿ-ն

տուգանվում է.

- մինչև 5 մլն ՀՀ դրամ

Ֆինանսական և տեխնիկական աուդիտը չներկայացնելու դեպքում

տուգանվում է.

- մինչև 3 մլն ՀՀ դրամ

Էլեկտրոնային հարթակում պարտադիր տվյալների չհրապարակելու կամ սխալ հրապարակելու դեպքում

6. Հաշվետվողականությունը ԱԸՊ համակարգում

ԱՊԿ-ի հաշվետրտվողականությունը

Ներկայացվող հաշվետվությունը	Ում է ներկայացվում	Ժամկետ
Տարեկան վարչական վիճակագրական հաշվետվություն (հատուկ թափոնների գործածության վերաբերյալ)	Տեսչական մարմին	Մինչև հաջորդ տարվա ապրիլի 1
Տարեկան ֆինանսական անուղիտի եզրակացություն	Լիազոր մարմին	Տարեկան
Տարեկան տեխնիկական անուղիտի եզրակացություն	Լիազոր մարմին	Տարեկան
Հատուկ թափոնի հայտարարագիր (կենտրոնացված՝ ԱՊԿ-ի կողմից՝ իր պայմանագիր կնքած արտադրողների համար)	Լիազոր մարմին (էլեկտրոնային հարթակով)	Ամեն եռամսյակ՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը
Հատուկ թափոնի գործածության ապահովման հիմնավորող փաստաթղթեր	Լիազոր մարմին	Հատուկ թափոնի հայտարարագրի հետ միասին

ՏԻՄ-ի հաշվերտվողականությունը

Ներկայացվող հաշվետվությունը	Ում է ներկայացվում	Ժամկետ
Եռամսյակային հաշվետվություն՝ համայնքի տարածքում հատուկ թափոնների գործածության վերաբերյալ	Տեսչական մարմին	Եռամսյակային
Տարեկան տեղեկատվություն՝ հատուկ թափոնների գործածության ապահովման և համայնքի ստացած եկամուտների վերաբերյալ (համայնքի պաշտոնական կայքում հրապարակում)	Հանրային (համայնքի կայք)	Տարեկան

Անհատական թույլտվություն ստացած Արտադրողների հաշվերտվողականությունը

Ներկայացվող հաշվետվությունը	Ում է ներկայացվում	Ժամկետ
Տարեկան վարչական վիճակագրական հաշվետվություն (հատուկ թափոնների գործածության վերաբերյալ)	Տեսչական մարմին	Մինչև հաջորդ տարվա ապրիլի 1
Հատուկ թափոնի հայտարարագիր	Լիազոր մարմին (էլեկտրոնային հարթակով)	Ամեն եռամսյակ՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը
Հատուկ թափոնի գործածության ապահովման հիմնավորող փաստաթղթեր	Լիազոր մարմին	Հատուկ թափոնի հայտարարագրի հետ միասին

Պետական մարմինների դերը

Կառավարությունը չունի հաշվետվական պարտավորություն
Իրականացնում է քաղաքականության և իրավական շրջանակի հաստատում

Լիազոր մարմինը չունի հաշվետվական պարտավորություն, սակայն.

- Վարում է ԱԸՊ ռեեստրը
- Վարում է Էլեկտրոնային հարթակը և
- Տրամադրում է թույլտվություններ

Տեսչական մարմինը չունի հաշվետվական պարտավորություն և

- Իրականացնում է վերահսկողություն
- Ստանում է հաշվետվություններ ՏԻՄ-երից, ԱՊԿ-ներից, Անհատ արտադրողներից
- Կիրառում է պատասխանատվության միջոցներ օրենքի համաձայն

7. ԱԸՊ ներդրման ճանապարհային քարտեզ

**Օրենքի
ընդունում**

ԱԸՊ ներդրման հիմնական 6 փուլ

ՓՈՒԼ 1	ՓՈՒԼ 2	ՓՈՒԼ 3	ՓՈՒԼ 4	ՓՈՒԼ 5	ՓՈՒԼ 6
<p>Օրենսդրության մշակումը և օրենքի ուժի մեջ մտնելը</p> <p>- ԱԸՊ-ի մասին օրենքի, ենթաօրենսդրական ակտերի, և հարակից օրենսդրական ակտերի փոփոխությունների փաթեթի մշակում:</p> <p>- Օրենքի բազմաշահառու կողմերի քննարկումներ:</p> <p>- Օրենքի ընդունում:</p>	<p>Նորմատիվ իրավական ակտերի ընդունում</p> <p>Կառավարությունը հաստատում է.</p> <ol style="list-style-type: none"> 1. ԱԸՊ ապրանքների ցանկը 2. Հատուկ թափոնների ցանկը 3. Տարեկան նորմատիվները 4. Էլեկտրոնային հարթակի և ռեեստրի կարգավորումները 5. ԱՅԼ ԱԿՏԵՐ 	<p>Տեխնիկական գործիքակազմի պատրաստում</p> <p>Լիազոր մարմինը ստեղծում և գործարկում է.</p> <ol style="list-style-type: none"> 1. ԱԸՊ ռեեստր 2. ԱԸՊ Էլեկտրոնային հարթակը 3. հաշվետվության ձևեր 	<p>ԱՊԿ-ների հայտերի գործընթաց</p> <p>Լիազոր մարմինը հայտարարում է խմբային թույլտվությունների հայտերի ընդունման մասին (1 ամսվա ընթացքում)</p> <p>Գրանցված ԱՊԿ-ները մշակում են խմբային ծրագրեր և ներկայացնում են հայտ</p>	<p>Թույլտվությունների տրամադրում</p> <p>Լիազոր մարմինը տրամադրում է.</p> <ol style="list-style-type: none"> 1. ԱՊԿ-ների խմբային թույլտվություններ- 2. Արտադրողներին անհատական թույլտվություններ՝ օրենքով սահմանված հատուկ դեպքերում <p>Հրապարակվում է համապատասխան տեղեկատվությունը ԱԸՊ Էլեկտրոնային հարթակում</p>	<p>ԱԸՊ գործարկման փուլ</p> <p>- Հատուկ թափոնների տեսակավորված հավաքում և վերամշակում</p> <p>- Նորմատիվների ապահովում</p> <p>- Տեսչական մարմինների կողմից վերահսկողություն</p> <p>- Տարեկան ֆինանսական և տեխնիկական աուդիտներ</p> <p>- Տարեկան վարչական հաշվետվություններ</p>

ՓՈՒԼ 1 - Օրենսդրության մշակումը և օրենքի ուժի մեջ մտնելը

- ԱԸՊ-ի մասին օրենքի մշակումը (փորձագիտական և քաղաքական գործընթաց)
- Ենթաօրենսդրական ակտերի նախագծերի նախապատրաստում
- Հարակից օրենքներում փոփոխությունների փաթեթի մշակում (հարկային օրենսգիրք, մաքսային կարգավորումներ, ՏԻՄ-երի մասին օրենք և այլն)
- ԱԸՊ էլեկտրոնային հարթակի ստեղծում
- Համակողմանի հանրային, մասնագիտական և բիզնես համայնքի քննարկումներ
- Օրենքի ընդունում Ազգային ժողովի կողմից, հրապարակում և ուժի մեջ մտնում
- Լիազոր մարմնի պաշտոնական որոշում օրենքի իրականացումն ապահովելու ուղղությամբ

ՓՈՒԼ 2 - Նորմատիվ իրվական ակտերի ընդունում

Կառավարության և լիազոր մարմնի կողմից հետևյալ ակտերի ընդունում.

- ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) ցանկ
- Հատուկ թափոնների և հատուկ թափոնների խմբերի ցանկ
- Հատուկ թափոնների գործածության տարեկան նորմատիվները
- ԱՊԿ խմբային թույլտվություն ստանալու կարգ
- Անհատական թույլտվություն ստանալու կարգ
- Ֆինանսական երաշխիքներին ներկայացվող պահանջներ և հաշվարկման կարգ
- ԱԸՊ էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիր և վարման կարգ
- ԱԸՊ ռեեստրի ձևը և վարման կարգը
- Հատուկ թափոնի հայտարարագրի նվազագույն պահանջներ և ներկայացման կարգ
- ԱՊԿ-ների կողմից հրապարակվող պարտադիր տեղեկատվության պահանջներ

ՓՈՒԼ 2 - Նորմատիվ իրվական ակտերի ընդունում

Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ **3 ամսվա ընթացքում, Կառավարությունը** պետք է հաստատի բոլոր անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերը, այդ թվում՝

- ԱՊԿ և անհատական թույլտվության տրամադրման կարգերը
- ԱԸՊ ապրանքների ցանկը
- Հատուկ թափոնների ցանկը
- Տարեկան նորմատիվները
- Ֆինանսական երաշխիքների պահանջները
- Ռեեստրի և էլեկտրոնային հարթակի կարգավորումները

ՓՈՒԼ 3 - Տեխնիկական գործիքակազմի պատրաստում

Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո **6 ամսվա ընթացքում, լիազոր մարմինը** պետք է իրականացնի՝

- ԱԸՊ ռեեստրի տեխնիկական հարթակի ստեղծում, փորձարկում, գործարկում
- ԱԸՊ էլեկտրոնային հարթակի գործարկում՝
 - ԱՊԿ-ների և արտադրողների գրանցման հնարավորություն
 - Հատուկ թափոնի հայտարարագրի ներկայացման հնարավորություն
 - Հաշվետվական տվյալների կառավարման հնարավորություն
- Վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերի հաստատում և հրապարակում


ՓՈՒԼ 4 - ԱՊԿ-ների հայտերի գործընթաց

- Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ **առավելագույնը 1 ամսվա ընթացքում**, լիազոր մարմինը հրապարակում է ԱՊԿ խմբային թույլտվությունների հայտերի ընդունման մասին հայտարարություն:
- ԱՊԿ-ների հիմնադրում՝ որպես հիմնադրամ (ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով)
- ԱՊԿ-ների կողմից՝
 - Խմբային ծրագրերի մշակում (Հոդված 32)
 - ԱՊԿ կանոնադրության և կառավարման կառուցվածքի ձևավորում
 - Ֆինանսական երաշխիքների ձևավորում
 - Հայտերի և փաստաթղթերի փաթեթի ներկայացում լիազոր մարմնին

ՓՈՒԼ 5 - Թույլտվությունների տրամադրում


- Լիազոր մարմինը գնահատում է ներկայացված խմբային և անհատական ծրագրերը
- Հաստատված չափանիշների և ընթացակարգերի հիման վրա՝
 - ԱՊԿ-ներին տրամադրում է խմբային թույլտվություններ **(3 տարի ժամկետով, առաջին անգամ)**
 - Անհատ արտադրողներին տրամադրում է անհատական թույլտվություններ (3 տարի ժամկետով)
- Հատուկ թափոնի գործածության համաձայնության տրամադրման ընթացակարգի գործարկում
- ԱԸՊ էլեկտրոնային հարթակում՝
 - Տեղեկատվության հրապարակում՝ խմբային թույլտվություն ստացած ԱՊԿ-ների և անհատական թույլտվություն ստացած արտադրողների վերաբերյալ
 - ԱՊԿ-ների կողմից հրապարակվող պարտադիր տեղեկություններ՝ կանոնադրություն, ԱԸՊ վճարների դրույքաչափեր, ծրագրի նկարագրություն

ՓՈՒԼ 5 - Թույլտվությունների տրամադրման սխեմա



ՓՈՒԼ 5 - Համաձայնության տրամադրման սխեմա

ԽՄԲԱՅԻՆ ՁԵՎՈՎ ԱԸՊ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՐՏԱԴՐՈՂԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ



Սույն կառուցակարգը թույլ կտա պահպանել մի շարք ընկերությունների կողմից նոր ապրանքներ մատակարարելիս գնորդի մոտ առաջացած հատուկ թափոնները, օրինակ՝ ըմպելիքների դատարկ ապակյա տարաները ետ վերցնելու ու վերօգտագործելու ձևավորված պրակտիկան:

ՓՈՒԼ 6 - ԱՊԿ գործարկման փուլ

- ԱՊԿ-ների և անհատ արտադրողների կողմից փաստացի թափոնների տեսակավորված հավաքման գործընթացների գործարկում
- Հավաքագրման ենթակառուցվածքների ստեղծում, պայմանագրերի կնքում՝
 - ՏԻՄ-երի հետ՝ տեսակավորման կազմակերպման և համայնքային ենթակառուցվածքների օգտագործման վերաբերյալ
 - Վերամշակող և օգտահանող կազմակերպությունների հետ՝ գործածության ապահովման նպատակով
- Տարեկան նորմատիվների կատարում (օրենքով սահմանված պահանջների համաձայն)
- Տեսչական մարմինների կողմից մշտադիտարկման և վերահսկողության իրականացում՝ ըստ Հոդված 41-ի

ՓՈՒԼ 6 - ԱՊԿ գործարկման փուլ (շարունակություն)

- Տարեկան վարչական վիճակագրական հաշվետվությունների ներկայացում (ԱՊԿ-ներ, անհատ արտադրողներ)
- Տարեկան ֆինանսական և տեխնիկական աուդիտների իրականացում և ներկայացում լիազոր մարմնին
- ՏԻՄ-երի կողմից եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում Տեսչական մարմնին և համայնքի կայքում
- Հատուկ թափոնի համաձայնությունների տրամադրման շարունակական գործընթաց (եթե կիրառելի է՝ ըստ Հոդված 38-39-րի)
- ԱՊԿ-ների կողմից հասարակության իրազեկման միջոցառումների իրականացում




ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԱԸՊ ներդրման տնտեսական ազդեցության նախնական գնահատում

Թափոնի խումբ	Օգտագործված առաջնային մարտկոցներ	Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոններ	Փաթեթավորման թափոններ	Օգտագործված ավտոմոբիլային անվադողեր	Ընդամենը
Թափոնի տարեկան գոյացում (տոննա/տարի)	315	20,000	187,000	18,731	226,046
ՇՄ հարկը մեկ միավորի համար (դր/տոննա)	36,482 դր.	0 դր.	0 դր.	5,118 դր.	41,601 դր.
ԱԸՊ ներդրման արդյունքում գոյացող պետական եկամուտ մեկ միավորի համար (դր/տոննա)	155,820 դր.	23,398 դր.	5,373 դր.	52,189 դր.	236,779 դր.
ԱԸՊ ներդրման արդյունքում ստեղծված աշխատատեղերի ընդհանուր թիվը	25	53	387	66	531
ՇՄ հարկի ընդհանուր եկամուտ (դր/տարի)	11.5 միլիոն դր.		0.0 միլիոն դր.	95.9 միլիոն դր.	107.4 միլիոն դր.
ԱԸՊ վճար մեկ միավորի համար (դր/տոննա)	600,000 դր.	150,000 դր.	25,000 դր.	350,000 դր.	1,125,000 դր.
ԱԸՊ ներդրման արդյունքում գոյացող ընդհանուր հարկային եկամուտ՝ թափոնների 100%-ը վերամշակելու դեպքում (մլն. դր/տարի)	49.1 միլիոն դր.		1,004.7 միլիոն դր.	977.6 միլիոն դր.	2,031.3 միլիոն դր.


Սույն աղյուսակում ներկայացված են նախկինում կատարված մոտարկված գնահատումների արդյունքներ:
ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնը՝ մասնագիտացված ընկերության միջոցով ներկայում հրականացնում է մանրամասն գնահատում:

ԽՄԲԱՅԻՆ ՁԵՎՈՎ ԱԸՊ




ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱԸՊ՝ ԽՄԲԱՅԻՆ ԶԵՎԻ ԴԵՊՔՈՒՄ

Նորմատիվ
(%)



ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԵՎՈՎ ԱԸՊ



ԱԸՊ պարտավորություններն իրականացնելու ձևերը և դրանց պայմանները

ԱԸՊ-ի
մասին ՀՀ
օրենքը
մտնում է
ուժի մեջ

Կառավարությունը հաստատում է .

1. ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) ցանկը
2. Հատուկ թափոնների և հատուկ թափոնների խմբերի ցանկը
3. Հատուկ թափոնների գործածության տարեկան նորմատիվները
4. ԱՊԿ (արտադրողի պատասխանատվության կազմակերպություն) խմբային թույլտվություն ստանալու կարգը
5. ԱԸՊ անհատական թույլտվություն ստանալու կարգը
6. Հատուկ թափոնների գործածության համաձայնություն ստանալու կարգը
7. Ֆինանսական երաշխիքին ներկայացվող պահանջները և հաշվարկման կարգը
8. ԱԸՊ էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը
9. ԱԸՊ ռեեստրի ձևը և վարման կարգը
10. Հատուկ թափոնի հայտարարագրի նվազագույն պահանջները և ներկայացման կարգը
11. ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) մակնշմանը ներկայացվող պահանջները

Գրացված ԱՊԿ
հիմնադրամերը
մշակում են
ծրագիր և դիմում
են ՇՄՆ
թույլտվություն
ստանալու
համար:

Փուլ

Գործողություն

Պատասխանատու

Փուլ 1
Օրենսդրության մշակումը
և օրենքի ուժի մեջ մտնելը

ԱԸՊ-ի մասին օրենքի, ենթաօրենսդրական ակտերի, և հարակից օրենսդրական ակտերի փոփոխությունների փաթեթի մշակում: Օրենքի բազմաշահառու կողմերի քննարկումներ:

Ազգային ժողով / ՀՀ
Նախագահ /
Կառավարություն

Փուլ 2
Նորմատիվ իրավական
ակտերի ընդունում

Կառավարությունը հաստատում է.- ԱԸՊ ապրանքների ցանկը- Հատուկ թափոնների ցանկը- Տարեկան նորմատիվները- Թույլտվությունների տրամադրման կարգերը- Ֆինանսական երաշխիքների պահանջները- Էլեկտրոնային հարթակի և ռեեստրի կարգավորումները

Կառավարություն

Փուլ 3 Տեխնիկական
գործիքակազմի
պատրաստում

Լիազոր մարմինը ստեղծում և գործարկում է.- ԱԸՊ ռեեստր- ԱԸՊ էլեկտրոնային հարթակ- Վարչական հաշվետվության ձևեր

Լիազոր մարմին

Փուլ 4
ԱՊԿ-ների հայտերի
գործընթաց

Լիազոր մարմինը հայտարարում է խմբային թույլտվությունների հայտերի ընդունման մասին (1 ամսվա ընթացքում)Գրանցված ԱՊԿ-ները մշակում են խմբային ծրագրեր և ներկայացնում են հայտ

Լիազոր մարմին, ԱՊԿ-ներ

Փուլ 5
Թույլտվությունների
տրամադրում

Լիազոր մարմինը տրամադրում է.- ԱՊԿ-ներին խմբային թույլտվություններ- Անհատ արտադրողներին անհատական թույլտվություններՀրապարակվում է համապատասխան տեղեկատվությունը ԱԸՊ էլեկտրոնային հարթակում

Լիազոր մարմին, ԱՊԿ-ներ,
անհատ արտադրողներ

Փուլ 6
ԱՊԿ գործարկման փուլ

Թափոնների տեսակավորված հավաքումՏարեկան նորմատիվների կատարումՏեսչական մարմինների կողմից վերահսկողությունՏարեկան ֆինանսական և տեխնիկական աուդիտների իրականացումՏարեկան վարչական հաշվետվությունների ներկայացում

ԱՊԿ-ներ, անհատ
արտադրողներ, ՏԻՄ-եր,
Տեսչական մարմին